

## ՔԱՂՎՈՐԱԳՈՎՔԻ ԵԵՍԻ ՄԻ ՀՆԱԳՈՒՅՆ ՏԱՐԲԵՐԱԿ

1. Հայոց ավանդական հարսանիքում կարևոր նշանակություն ունի թագվորագովքի ծեսը, որը համահայկական լինելով հանդերձ, աչքի է ցնկնում տեղական առանձնահատկություններով: Եեսի տարբերակներից մեկը, որը վերջերս գրանցեցինք ՀՍՍՀ Ազիտակի շորջանում բնակվող ալաշկերտցիներից, հույժ ուշագրավ է յուրովի բնութագրով, երաժշտությամբ և դեպի ժողովրդական հնագույն հավատալիքներն ու պաշտամունքը գնացող արմատներով:

2. Եեսն սկսվում է թագվորագովքի երգով, որտեղ արդեն ցնդունված փեսի գովքի, նրա արևշատության ու բարեբախտության մաղթանքների հետ միասին, հիշատակվում է փեսի կողմից, , հավերջարդելու, , սովորությունը, որը և, ի տարբերություն մինչև այժմ գրանցված նյութերի, կատարվում է տեղում՝ փեսի ծառ պտորաստելու ու գովելու արարողությանը զուգահեռ:

3. Եեսն ցնթանում է դարբնի գլխավորությամբ կատարվող շուրջվարի ներսում /յոթ պտույտ/: Շուրջվարի աստիճանաբար արագացող երաժշտությունը, ըստ բանասացների, նմանակում է երկնքի խոռվոց, իսկ թմբուկի ուժգին հարվածները՝ որոտն ու կայծակը: Յուրաքանչյուր հարվածն ուղեկցվում է հավերից մեկի գլխատմամբ:

4. Շուրջվարի ներսում, քավորի գլխավորությամբ զարդարվում է փեսի ծառը /միայն ազապները/, որը կառուցվածքով եռաշարք է՝ զազաթին ամրացված փետուրների փնջով: Պտորաստի ծառը կանգնեցվում է զոհաբերված թռչունների արյունից հողին զծված խաչի կենտրոնում /տարբերակ /, խրվում հողում և առվում արյամբ զծված շրջանի մեջ /տարբերակ /, , արմատը, , թաթախվում արյան մեջ և կանգնեցվում հողում /տարբերակ /: Բոլոր տարբերակներում էլ թռչնի արյունից խաչեր են արվում փեսի, քավորի, ազապաշու /համախ հա՛հ հիվանդ երեխաների ու ամուլ կանանց/ մակատին:

5. Ինչպես արդեն ակնհայտ է շարադրվածից, Եեսի վերոհիշյալ տարբերակը ցնթելիս ուշագրավ են հեռույժ հանգամանքները.

ա/ կեսաց ծառը ծնվում է զոհաբերված թռչնի արյունից, խաչի կենտրոնից.

բ/ ծեսը կատարվում է առազաստից առաջ, որտեղ նույնությամբ կրկնվում է արյուն-զոհ-նոր կյանքի ծնունդ շղթան.

գ/ զոհի արյամբ բուժվում են հիվանդներն ու պողաբերվում ամուլ կանայք.

դ/ փեսի ծառի ստեղծման ու զոհաբերության ծեսերը կատարում են միայն ազապները՝ քավորի գլխավորությամբ.

ե/ ծիսական մեծ շուրջպարը /որին համախ մասնակցում է ամբողջ գյուղը՝ բացի հարսնատերերից /գլխավորում է դարբինը, որը կապվում է ամպրոպի ու կայծակի հետ՝ հովանավորելով փեսի ծառն ու խափանելով շար ուժերը, հմտ. դիցաբանական դարբնի կայծակնային հատկությունների հետ/.

զ/ փեսի ծառի եռամասնությունը և նրա զազաթին թռչնի կամ նրա խորհրդանիշը դարձած փետուրների առկայությունը մեկ անգամ ևս հաստատում է ծառի տիեզերական բնույթը և հենց այդպիսի ծառի հետ դարբնի ունեցած կապը: Եթե ծեսում քավորը կապվում է փեսի ծառի հետ և հովանավորում ավյալ նորաստեղծ քնտանիքի պողաբերությունը, ապա դարբինը կարծես հովանավորում է ամբողջ համայնքը:

է/ ծեսի ամբողջ քնթացքում հնչող զուռնա-դհոլի երաժշտությունը ևս հանդես է գալիս որպես պողաբերությունն ու կյանքի ծնունդը հովանավորող շարխափան ուժ:

6. Հարսանեկան ծեսի տարբեր փուլերում հավի գլուխներ պոկելու կամ օղում սրով թոցնելու սովորույթը տարածված է եղել Հայաստանի տարբեր շրջաններում /,,Հավթուռկ,, , ,Փեսի որս,,/:

7. Ծեսի վերափոխված տարբերակներից մեկը մինչև 1960-ական թվականները պահպանվելիս է եղել Ադրբեջանական ՍՍՀ Դաշքեսանի /Քարհատի/ շրջ. Բանանց գյուղում /պատմական Ուտիք/՝ որպես նորակոչիկների սվիրազործման ծես: Եռո-զոհ-առևակասություն-նոր կյանքի ծնունդ /մի դասից մյուսին անցնելը/ գաղափարը կրկնվում է նաև սվիրազործման ծեսում, որը գուցե և թազվորագովքի վերոհիշյալ ծեսի տարբերակի հեռավոր արձագանքներից է:

Ա.Ա. ԳՈՂՈՍՅԱՆ

ՀԱՅ

ՀԱՅ ԿՈՐԿԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՐԳԵՏԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՏԵԽՆԻԿԱՑԻ ՈՒ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՑԻ ՄԻՋՆԱԴԱՐՑԱՆ ԱՎՈՒՆՔՆԵՐԸ

1. Հայկական գորգագործության և կարպետագործության պատմության